

Համշենտհայերը հասաաավելով Համշեն ու Սե-գեա (Սյուրմենի) լեռնաշխարհում, հիմնականում զբաղվել են երկրագործությամբ, մասամբ՝ անասնապահությամբ, արհեստներով կամ առետորով։ Մշակել են հողը, տուն ու տեղ կառուցել, ագնիվ աշխատանքով ընտանիք պահել, աղ-գային շատ թե քիչ ինքնուրույն կյանք վարել։ XVII—XVIII դդ. գաժան ճակաագրի բերումով հայրենի վայրերը՝ Համշեն ու Սե-գեա գավառները թողած, համշենահայերը մեծ ու փոքր խմբերով գաղթում ու բնակություն են հասաաաում Պոնտոսի միջին ու արևմտյան երկրամասի Տրապիզոն, Օրգու, Սամսոն, Սինոպ, Նիքսար, Հելլեոլ լեռնա-յին շրջաններում և շարունակում գյուղաանասնու-թյամբ զբաղվել։

Գաղթած համշենահայերից նրանք, ովքեր փո-խադրվում են քաղաք (Տրապիզոն, Նիքսար, Օր-գու, Սամսոն) հեղհեմե ձուլվում են տեղացի հայ բնակչությանը, կորցնում իրենց ինքնուրույն բար-րաորը, կենցաղային սովորությունները։

Համշենահայությունը որպես աղգային յուրա-հառուկ հատված, ուրույն գեմքով, կենցաղով ու սովորույթներով, սեփական բարբառով ուժեղ էր մնացել գյուղական միջավայրերում։ Դա հատկա-նշական էր նաև հայրենի երկրում։ Այդպես էլ շա-րունակվում է Սե ծովի կովկասյան ափերը գաղ-թած համշենտհայերի բնակավայրերում։

Համշենցի գեղջուկը սիրով կառչած էր իր սպրած բնակավայրին, հարադատ համայն-քին, իր օջախին՝ ընամանիքին։ Նրա համար օաար էր հարկադրական թախտական կյանքը, քուլտու-րությունը։ Նա առաջնորդվում էր ժողովրդական իմաստալից ասացվածքներով՝ «Գլորվող քարին յոխուլ (մամուլ) չի կիչիլ», «Քարը ույ տեղը (իր տեղում) ծոնը կուգա»։ Նա չի հանդուրժել մի կտոր հացի համար ուրիշին ձեռք կարկտել։ Մուլը անարգվում, նախատվում էր բոլորի կող-մից։

Սակայն, հակառակ ավանգորեն միս ու ար-յուն գարձած այս խրախուսելի հատկություննե-րին, հայրենի հողից վտարանգի համշենցի շինա-կանը նոր բնակավայրերում դառնում էր ընշա-

գուրկ, գրկված սեփական անկյունից, մի կտոր հողից։

Տեղին է հիշել, որ մինչև թուրք աշխարհու-կալների Պոնտոս ներխուժելը (XV դ. 60-ական թվականները), անմատչելի անտառներով ծածկ-ված այդ աառածությունների մշակության հար-մար վայրերը, բնիկ աղգերի՝ հույների, մասամբ էլ հայերի ձեռքին էին։ Սակայն բարբարոս զալ-թիչների վայրագություններից սարսափահար, բնակիչների մեծ մասը հեռացել էր, ամայի թող-նելով իր ծաղկուն լեռները, որոնք 200—300 տարվա ընթացքում, մինչև համշենահայերի այգ վայրերում հասաատվելը, դարձել էին կուսական անտառներ ու թփուսներ։

Սնցյալի բեղուն էյանքի անժխաելի վկաներ են մինչև մեր օրերը մնացած ավերակ ու կիօա-վեր ռազմաթիվ ուխտավայրերն ու եկեղեցիները։ Միայն իմ ծննդավայր Յոմուրայի վիճակի գյու-ղերում գտնված այգալիսի հիշարժան վայրերի թիվը աասնյակներով էր հաշվվում։ Այգալիսիք էին՝ Մինկիլա գյուղի կիսավեր եկեղեցին, Միսա-խոր ու Կրոմիլա գյուղերի կանգուն մնացած քա-րաշեն եկեղեցիներն ու բաղմաթիվ ավերակ ու կանգուն ուխտավայրերը։ Տեղական բնակիչների ավանգապաաումները հաստատում էին տյգ վայ-րերի ճիճեթգեթի (ձենովացիների) ժամանակնե-րից մնացած լինելը։

Հաղաաիւթյան և վաւաւկաւման ձեւերն ու միջոցները։ Նոր բնակավայրերում հողի տերն ու աիրականր մեծ ու փոքր թուրք կալվածատերերն էին՝ աղաներն ու բեկերը։ Նրանցից յուրաքան-չյուրը, ըստ իր գիրքի ու հեղինակության, թուր-քական իշխտնությունից ընծա էր ստացել հա-մապատասխան հողամաս կամ շնչին գումարով ձեռք բերել այդպիսին։

Ճարահաա ու անօգնական համշենահայերը ստիգված են լինում գիմել ինքնիշխան ձորա-պաններին (տեւեւեյ)՝ հողատեր բեկերին, աղա-ներին, կապալով վերցնել ստվարաիւտ կուսու-կան անտառները, օր ու գիշեր, քրտնաթոր աշխա-տանքով հաստարուն ծառերը աապալել, արմատ-ներից ու քարերից մաքրել խապանացած հողերը, ցանել ու մշակել և ստացած բերքի աուուծի րա-



իներ շալակով տանել, լցնել անկուշտ աղտյի ամրարր:

Կոյուժյուն ունենին հողի վարձակալման զանազան ձևեր, որոնցից ամենատարածվածը մաքաբաջիկն էր. կտպալառու (վարձակալ) գյուղացիներին ընդհանրապես մաքաբաջ էին անվանում, իսկ առանձին գավառներում (Ասմսոն, Օրդու)՝ Բույնքե (քոչվոր):

Վարձակալման արժեքի մասին օրենսգրույթյուն դրույթյուն չունեի. Հողատերերը վարձակալական արժեքը վերցնում էին ընամթերքով՝ բերքի մեկ տասներորդից մինչև կեսը ե. ավելին: Իսկ կապված էր փոխադարձ պայմանավորվածություներից, հողամասի հարմարավետությունից, հեռավորությունից, բերքավտությունից, մշակույթի եկամտաբերությունից ու, գլխավորը՝ հողատիրոջ քանակազույգից: Այսպես, օրինակ, հացահատիկներից վերցնում էին մեկ չորրորդից մեկ հինգերորդը, ծխախոտից՝ 50%-ը, կադիխի բերքից՝ երկու երրորդից երեք չորրորդը ե. այլն:

Վարձակալման հիմնական ձևերն էին՝ մաքաբաջիկով, մարարա կամ քոչվոր էին կոչվում հողավուրկ ե. մեծ մասամբ տուն չունեցող այն վարձակալները, որոնց կալվածատերերը չնչին առիթով, դեռ պայմանագրի ժամկետը չլրացած կարող էր հեռացնել իր հողամասից, փողոց շրպրտել: Յարիջի (կիսագու) կոչում էին այն վարձակալներին, որոնք, համաձայն պայմանագրի, սաանում էին հովաքած բերքի 50%-ը: Քեսիմջի (քեսում=մաս բառից) կամ քեսումջի էին կոչում այն գյուղացիներին, որոնք թեև ունեին սեփական տուն, ոակայն սակավահող կամ հողագուրկ էին ե. ստիպված դիմում էին վարձակալության: Քեսումջիի առավելությունը մարարայի համեմատությամբ կայանում էր նրանում, որ նա ընաանիքով տնից դուրս շարավելու վախ չունեի:

Անել գրույթյան մեջ մնացած համշենցիին ըստիպված համաձայնվում էր կալվածատերերի առաջարկած վարձակալման ծանր պայմաններին, դառնում նրանց հղու մարարան՝ ռայան: Մարարան պարտավորվում էր իր միջոցներով ծառերից մաքրել զարավոր անտառները, գրանց տեղում տուն, անամերձ, հողամաս ե. օժանդակ շենքեր կառուցել, կալվածատիրոջը «հասանելիք» բերքի բաժինը մեծ մասամբ շալակով կամ սեփական փոխադրական միջոցներով նրա պահեստը աանել: Մարարան իրավունք չունեի քարաշեն տուն շինելու, բազմամյա պաղառու ծառեր ե. այգիներ տնկելու, քանդի պետական օրենքով այդպիսիք դառնում էին կառուցողի, տնկողի սեփականությունը: Հողատիրոջ հետ պայմանավորված ժամ-

կետը լրանալիս, մարարան պարտավորվում էր իր կառուցած բոլոր շինությունները անվճար թողնել հողատեր կապալատուին: Այդ պատճառով նա ստիպված էր համակերպվել հողատիրոջ առաջարկած ծանր պայմաններին, միայն թե իր ընտանիքով ապրելու տեղ ունենար, մի կտոր սե հացից չգրկվեր:

Բացի այդ, կային հողատեր վաշխառուներ, որոնք իրենց մարարաններին ապահովով տալիս էին հագուստ, սնունդ ե. անհրաժեշտ այլ պիտույքներ, իսկ աշնան վերջին տվածի դիմաց պահանջում 30—50%-ով ավելի ընամթերք կամ փող:

Մարարան կիսաճորտային պայմանների մեջ իր գտնվում: Թեև նա անձնապես ազաա էր, սակայն տնաեսական այնպիսի ծանր պայմաններում էր գտնվում, այն աստիճան շահագործվում, որ դժվար թե ճորտը նախանձեր մարարայի «ազատ» կյանքին: Բացի իրենց վարձակալած հողերից, մարարանները պարտավոր էին մշակել նաե հողատիրոջ սեփական անտեսությունը:

Կալվածատերերից շատերը, չուզենալով դրրկվել հարատե եկամտի աղբյուրից, մինչև վերջին ժամանակները պահում էին մարարաններ, միշտ առավելություն տալով հայերին՝ ոչ միայն որպես բանիմաց, աշխատասեր մշակների, այլև որպես իրավադուրկ, անպաշտպան, բողոքելու իրավունք չունեցող էժան աշխատուժի:

Պատահում էր նաե, որ բեկերից ու աղաներից ոմանք իրենց կալվածների ավելի հեռավոր ու մշակության համար անհարմար վայրերը համաձայնում էին վաճառելու հողագուրկ մարարահայերին:

XIX դ. կեսերից սեփական տնտեսություն ունեցող համշենահայերի թիվը աստեցտարի զգալիորեն ավելանում է: 1900-ական թվականներին մի շարք շրջաններում դուրագիություն մեծամասնությունը առավել կամ պակաս չափով սեփական տնտեսության տեր էր: Այնուամենայնիվ, նույնիսկ 1908 թ. խարուսիկ հեղաշրջումից հետո, համշենահայերի զգալի մասը սակավահող կամ հողագուրկ մարարա էր:

Ծղեռնի նախընթաց տարիներին Այուրմենեի, Ճեիզուդի ու Յոմուրայի վիճակներում ապրող համշենահայերը, չնչին բացառությամբ, սեփական անտեսության տեր էին՝ սակավ կամ միջակ ասարածության հողամասերով: Տրապիզոնի քաղաքամերձ գյուղերում ու Ագչեպատի վիճակում սեփականաաեր համշենահայերը հայ բնակչության հազիվ 35—40%-ն էին կազմում: